ՀՀ ԿԳՄՄՆ

«Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ

2023-2024 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն

Գորիսի պետական քոլեջը (այսուհետ՝ Քոլեջ) կրթական համակարգի զարգացման ներուժ ունեցող լիարժեք կառույց է, որի հիմնական առաքելությունն է որակի ազգային շրջանակի (ՈԱՇ), պետական կրթական չափորոշիչների և միջազգային չափանիշների համապատասխան նախնական ու միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստումը:

2023-24 ուստարում ԳՊՔ-ն իր գործունեությունը իրականացրել է հավուր պատշաճի՝ հավատարիմ մնալով իր առաքելությանը:

Ստորև ներկայացնում ենք ԳՊՔ-ի հաշվետու ժամանակաշրջանի գործունեությունը:

ԳՊՔ կառավարումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության, Քոլեջի կանոնադրության, ներքին կարգապահական կանոնների և այլ իրավական ակտերի համապատասխան:

Արդյունավետորեն գործել են կառավարման բոլոր մարմինները, կառուցվածքային և ենթակառուցվածքային ստորաբաժանումները:

Կառավարման խորհուրդը Քոլեջի կոլեգիալ կառավարման բարձրագույն մարմինն է, որը ձևավորվել է դասախոսական, ուսանողական կազմի ներկայացուցիչներից, ինչպես և լիազոր մարմնի ներկայացուցիչներից:
Քոլեջի կառավարման մարմինները՝ կառավարման խորհուրդը եւ տնօրենը ապահովել են ԳՊՔ-ի կառավարչական աշխատանքները: Կոլեգիալ մարմնի իրավասությունների շրջանակը սահմանված է ԳՊՔ կանոնադրությամբ եւ Կառավարման խորհրդի աշխատակարգով:
Հաշվետու տարվա ընթացքում ընդհանուր առմամբ գումարվել է Կառավարման խորհրդի 9 նիստ:
Ստորև ներկայացնում ենք **կառավարման խորհրդի** կազմը՝

Հ.	Անուն, ազգանուն, հայրանուն	Պաշտոնը/ներկայացուցիչը
1	Կարեն Պետրոսյան Արտուշի	Գորիսի Քաղաքացիական պայմանագիր գրասենյակի քարտուղար-հիմնադիր ներկայացուցիչ
2	Գոհարիկ Խաչատրյան Թովմասի	ՀՀ ԿԳՄՍ նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության մասնագիտական կրթության ուսուցման բաժնի գլխավոր մասնագետ-լիազոր մարմնի ներկայացուցիչ
3	Գայանե Վարդանյան Վրեժի	դասախոսական կազմնի

		ներկայացուցիչ
4	Դավիթ Ջուլհակյան Գագիկի	դասախոսական կազմնի ներկայացուցիչ
5	Արփինե Աբալյան Սաքոյի	ուսանողական կազմի ներկայացուցիչ
6	Էլեոնորա Խաչատրյան Վլադիկի	ուսանողական կազմի ներկայացուցիչ
7	Լեոնիկ Ազրյան Վրեժիկի	ուսանողական կազմի ներկայացուցիչ
8	Լևոն Հարությունյան Մամիկոնի	«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության գլխավոր բժշկի տեղակալ-գործատուների ներկայացուցիչ
9	Նվեր Պողոսյան Ռաֆիկի	ՀՀ Սյունիքի մարզի Հարթաշենի միջնակարգ դպրոցի տնօրեն-գործատուների ներկայացուցիչ
10	Արարատ Լալաբեկյան Արմենակի	Գորիսի տարածքի կրթության եւ գիտության աշխատողների արհմիության նախագահ-արհմիության ներկայացուցիչ
11	Վարուժան Ալեքսանյան Ռոբերտի	Միսանական սոցիալական ծառայության Գորիսի տարածքայի կենտրոնի տնօրեն-զբաղվածության ոլորտի ներկայացուցիչ

ԳՊՔ-ի մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ տարի ժամկետով և կազմավորվում է օգոստոսյան առաջին նիստին:

Հաշվետու տարում իրականացվել են մասնագիտական կողմնորոշման մի շարք աշխատանքներ:

Տեղի են ունեցել դպրոց-քոլեջ փոխադարձ այցելություններ (Գորիսի տարածաշրջանի դպրոցների աշակերտները, ուսուցչական անձնակազմ)/: Հանդիպման ընթացքում ներկայացվել է քոլեջի կրթական ծրագրերը, մասնագիտությունները, ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Ընդունելությունն իրականացվել է միջին մասնագիտական և նախնական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ընդունելության կարգի համաձայն:

Ընդունելությունը տեղի է ունեցել առցանց: Դիմորդները հայտագրվել են Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրենի dimord.emis.am կայքում:

Ներկայացնում ենք 2023-2024 ուստարվա ընդունելության արդյունքները.

N	ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ	2023 Թ. ԸՆԴՈՒՆՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ՝ ԸՍՏ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ		
		ԱՆՎՃԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄ	ՎՃԱՐՈՎԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ	ԸՆԴԱՄԵՆԸ
1.	0612.02.5 *Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում*	5	5	10
2.	0612.02.5* *Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում*	18	1	19
3.	0112.01.5 *Նախադպրոցական կրթություն*	7	5	12
4.	0913.02.5* *Քույրական գործ*	0	10	10
5.	0913.02.5 *Քույրական գործ*	0	19	19
6.	0916.01.5 *Դեղագործություն*	0	16	16
	ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ			
7.	0611.01.4 *Համակարգիչների շահագործում*	0	17	17
8.	1013.03.4 *Խոհարարական գործ*	11	9	20
9.	0732.06.4 *Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ*	11	1	12
	*-ովը հիմնական ընդհանուր կրթությամբ			
ԸՆԴԱՄԵՆԸ		52	83	135

2023-2024 ուսումնական տարին առկա ուսուցմամբ մեկնարկել է սեպտեմբերի 1-ից: Նախքան մեկնարկը, ուսումնական մասը, ամբիոնների վարիչներն ու մեթոդմիավորումների նախագահներն իրականացրել են ժամաբաժանումներ,

կազմվել է կայուն դասացուցակ, ուսումնական պլանի ժամանակացույց, հաստատվել են 2023-2024 ուստարվա թեմատիկ պլանները:
2023 թվականի օգոստոս ամսին՝ նախքան ուսումնական տարվա մեկնարկը, վերանայվել են որոշ առարկայական և մոդուլային ծրագրեր՝ համապատասխանեցվելով կրթական չափորոշիչներին:

Հաշվետու ժամանակաշրջանում «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում աշխատել են **42** դասախոս

Որից՝ ***հիմնական (ներառյալ արտադրության վարպետները)՝22 դասախոս,***
ներքին համատեղությամբ՝7 դասախոս,
արտաքին համատեղությամբ՝13 դասախոս:

Ուսումնական տարվա ընթացքում լուծվել է 22 դասախոսի պայմանագիր, որից՝
իր դիմումի համաձայն՝1 դասախոս,
հաստիքը կրճատվելու պատճառով 2 դասախոս,
պայմանագրի ժամկետը լրանալու պատճառով՝19 դասախոս (համատեղությամբ ախատող դասախոսները):
2023-2024 ուստարում Քոլեջում աշխատել են 32 վարչատնտեսական աշխատակից:

Ուսումնական տարվա ընթացքում լուծվել է 10 աշխատակցի պայմանագիր, որից՝
իր դիմումի համաձայն՝7 աշխատակից,
պայմանագրի ժամկետը լրանալու պատճառով՝3 աշխատակից:

Օգոստոսի 31-ի դրությամբ Քոլեջի աշխատակիցների թիվը 42-ն է:
Քոլեջի ուսանողներն իրենց ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաներն անց են կացրել Գորիսի բժշկական կենտրոնում, Գորիսի ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոնում, դեղատներում, նախակրթարաններում, քարի արտադրամասում, կահույքի արտադրամասում, ռեստորաններում:

ԳՊՔ-ում գործում է կարիերայի կենտրոնը, որը մշտապես հետադարձ կապ է հաստատել շրջանավարտների հետ, ովքեր պարբերաբար իրազեկվել են թափուր աշխատատեղերի մասին: Ստեղծվել են քոլեջի ուսանողների տվյալների բազաները:

Կատարվել են հարցումներ Գորիսի պետական քոլեջի շրանավարտների շրջանում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ:

Իրականացվել է 56 շրջանավարտի հարցում, որից

- ***17-ը աշխատում է ըստ մասնագիտությամբ***
- ***16-ը ոչ մասնագիտությամբ***
- ***21-ը չի աշխատում***

Կենտրոնը մշտապես կապ է հաստատել Գորիսի զբաղվածության տարածքային կենտրոնի, գործատուների հետ: Միասնական սոցիալական ծառայության Գորիսի

տարածքային կենտրոնի եւ ԳՊՔ-ի կարիերայի կենտրոնի համագործակցության արդյունքում, տեղի է ունեցել հանդիպում՝ համայնքի շահագրգիռ գործատուների հետ: Քննարկել են աշխատաշուկայի արդի կարիքների մասին, վեր հանվել գործատուների պահանջներն ու սպասելիքները՝ անհրաժեշտության դեպքում դրանք ՄԿԾ-ում արտացոլելու նպատակով:
Հարցումներ են կատարվել նաև գոծատուների շրջանում՝ ԳՊՔ-ի շրջանավարտների պատրաստման որակի բավարարվածության վերաբերյալ: Հարցմանը մասնակցել են 7 գործատու:

Հարցման արդյունքներին ծանոթացեք ստորև.

	1,1	մասնագիտական պատրաստվածությունը	21	100,0%
	1,2	տեսական գիտելիքների իմացությունը	19	90,5%
	1,3	գործնական հմտությունները	18	85,7%
	1,4	հաղորդակցվելու կարողությունները	18	85,7%
	1,5	կազմակերպչական կարողությունները	19	90,5%
	1,6	մասնագիտական գործընթացում ստեղծագործական մոտեցումները	18	85,7%
	1,7	քննադատական-վերլուծական կարողությունները	16	76,2%
	1,8	տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունները	17	81,0%
	1,9	խնդրահարույց հարցեր առաջադրելու և դրանց լուծման արդյունավետ ուղիներ փնտրելու կարողությունները	15	71,4%
	1.10	մասնագիտական խոսքը	17	81,0%
	1.11	էթիկայի և վարվելակերպի կանոններին հետևելը	21	100,0%
	1.12	աշխատանքային պատասխանատվությունը	21	100,0%
	1.13	թիմային աշխատանք կատարելու ունակությունները	19	90,5%
	1.14	գործընկերներին գնահատելու և նրանց օգտակար լինելու կարողությունները	20	95,2%
	1.15	ինքնազարգացման ձգտումը	17	81,0%
2	*Գնահատեք Գորիսի պետական քոլեջի հեղինակությունը.*			
	2,1	Ձեր կազմակերպությունում	21	100,0%
	2,2	տարածաշրջանում	21	100,0%
		ՀԱՐՑՎԱԾՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՈԿՈՍԸ	89,1%	

Ընթացիկ տարում Որակի ապահովման պատասխանատուի կողմից իրականացվել են հարցումներ, դասալսումներ, ֆոկուս խմբերի միջոցով վեր են հանվել ուսանողների կարիքները: Հարցումների ընթացքում դասախոսներն ու ուսանողները հիմնականում դժգոհություն են հայտնել ջեռուցման վիճակից, որը Քոլեջի առաջնային խնդիրներից մեկն է:

Հաշվետու տարում հրապարկվել է երկու ուսումնական ձեռնարկ՝ «Տեղեկատվության անվտանգություն» և «Համակարգչային տեխնոլոգիա» անվանումներով:
Քոլեջում իր գործունեությունն է ծավալում ուսանողական խորհուրդը (այսուհետ ՈՒԽ), որը ուսանողության ներկայացուցչական, ինքնակառավարման և ուսանողների շահերը ներկայացնող բարձրագույն ընտրովի մարմին է:

Հաշվետու տարում ՈՒԽ-ն կազմակերպել է տարաբնույթ միջոցառումներ՝ աշխատանքային պլանի համաձայն , հանդես եկել նախաձեռնություններով:

Հաշվետու տարում քննություններն անցել են կազմակերպված, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտում, պատշաճ մակարդակով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

Բոլոր ուսանողները հաջողությամբ ավարտել են քննությունները և ստացել համապատասխան որակավորումներ:

Ամփոփիչ ատեստավորումների արդյունքների ամփոփումը ստորև՝

Միջին մասնագիտական

№	Գերազանցության դիպլոմ	Սովորական նմուշի դիպլոմ
1	7 դիպլոմ	38 դիպլոմ

Նախնական/արհեստագործական/ մասնագիտական

№	Գերազանցության դիպլոմ	Սովորական նմուշի դիպլոմ
1	2 դիպլոմ	18 դիպլոմ

Քոլեջի գրադարանի հիմնադրման պահից Գրադարանի առաքելությունն է ապահովել ուսումնական գործընթացը՝ տրամադրելով տեղեկատվության մատչելիություն, նպաստելով հետազոտական գործունեության, դասավանդման և կրթության զարգացմանը: Գրադարանին կից գործում է ընթերցասրահ: Այստեղ կազմակերպվում են նաև միջոցառումներ, վերապատրաստման դասընթացներ և այլն:

Քոլեջի արտաքին կապերի ընդլայման և զարգացման նպատակով արտաքին կապերի պատասխանատուն մասնակցել է Հայաստանում Էրազմուս+ ազգային գրասենյակի կողմից իրականցվող մի շարք միջոցառումների: Միջոցառումները միտված էին բացահայտելու ՄԿՈՒ ոլորտում առկա կարիքներն և փորձի փոխանակման միջոցով հաղթահարելու ծառացած մարտահրավերները:

Հաշվետու տարում համագործակցության պայմանագիր է կնքվել Գորիսի պետական քոլեջի և Կապանի արվեստի պետական քոլեջի միջև: Նպատակն էր իրականացնել մասնագետների վերապատրաստում, համատեղ համաժողովներ, թեմատիկ մշակութային միջոցառումներ, տարբեր ծրագրեր:

Որպես նախաձեռնող խումբ արտաքին կապերի պատասխանատուն Քոլեջի որակի ապահովման պատասխանատուի և կարիերայի պատասխանատուի հետ միասին՝ դիմել են Գորիսի մամուլի ակումբին՝ հայտարարված դրամաշնորհային ծրագրով Գորիս խոշորացված համայնքի զարգացմանն ուղղված նախաձեռնություններ իրականացնելու համար: Ծրագրի նպատակն էր խթանել Գորիս խոշորացված

համայնքի երիտասարդների հմտությունների զարգացմանն ու մասնագիտական կողմնորոշմանը՝ այլընտրանքային կրթության միջոցով՝ նպաստելով Քոլեջում լուսանկարչության ստուդիայի ստեղծմանը:

Արտաքին կապերի գործունեությանը նպաստելու համար արտաքին կապերի պատասխանատուն հիմնական բարելավման ուղիներ է համարել հետևյալ կետերը՝

- ✓ Ընդլայնել օտար լեզվակրթության հնարավորությունները ուսանողների, դասախոսների և վարչակազմի համար՝ լրացուցիչ պարապմունքներ միջոցով՝ մասնագիտական զարգացման ծրագրի շրջանակներում,
- ✓ Դասախոսական և վարչական կազմի համար դրամաշնորհային ծրագրեր շահելու վերաբերյալ թրեյնինգների կազմակեպում:

2023 թ. նոր ուսումնական տարում ԿԳՄՍ նախարարությունը Քոլեջի հետ (ընդունելության արդյունքների հիման վրա) կնքել է թվով չորս ֆինանսական պայմանագիր միջին մասնագիտական (ուսանողական նպաստ, կրթաթոշակ) և նախնական մասնագիտական (արհեստագործական ուսանողական նպաստ, կրթաթոշակ):

Քոլեջը բացի պետբյուջեի ֆինանսավորումից ունի նաև այլ (սեփական) եկամուտ, որը գոյանում է վճարովի համակարգում սովորող ուսանողների ուսման վարձերից:

2023 թ. սեպտեմբերի 19- ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, Քոլեջ ընդունված թվով 10 ուսանողի ուսման վարձը 680 000 (վեց հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ փոխհատուցվել է կառավարության 2023 թ. հոկտեմբերի 23-ի թիվ 1762-Լ որոշման համաձայն:

4 նոյեմբերի 2021 թվականի N 1784-Ն որոշման համաձայն 34 ուսանող օգտվել են ուսման վճարի փոխհատուցման (լրիվ կամ մասնակի) զեղչից սահմանված կարգով.

1.ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող թվով 7 ուսանող 645 000 դրամ,

2.սահմանամերձ համայնքների 19 ուսանող 1460000 դրամ,

3.երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող 8 ուսանող 600000 դրամ:

Ֆինանսական արդյունքների հիման վրակազմվել է նախահաշիվ, որը Քոլեջի ֆինանսական գործունեության հիմքն է:

Նախահաշվը կառավարման խորհրդի հավանության արժանանլուց հետո վերջնական հաստատվել է ԿԳՄՍ նախարարության կողմից: Նախահաշվում ըստ հոդվածների մուտքագրվել են եկամուտները և ծախսերը, առաջնահերթությունը տալով կրթության գործընթացի անխափան ապահովմանը: Ֆինանսների 87.2%-ը (**77951593 դրամ**) տրամադրվել է աշխատավարձի վճարմանը, իսկ 5.5%-ը (**4519150**

դրամ) կրթաթոշակին: Մնացած7.3 %-**ը (7108320 դրամ**) տրամադրվել է շենքի պահպանության և մատուցվող ծառայությունների համար:

2023 թ. ընդունելության արդյուքում Քոլեջ են ընդունվել թվով 130 ուսանող, որից 68-ը անվճար ուսուցմամբ, 62-ը՝ վճարովի:

Համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 27-ի N 1289 - Ն որոշման Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսուցանվող **առաջնահերթ և կարևոր ոլորտների** մասնագիտություններից Քոլեջում «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտությամբ հիմնական կրթության հիմքով ընդունվել են 12 ուսանող, որոնց տրամադրվել է 50000 դրամի չափով կրթաթոշակ:

2023 թ. ընթացքում Քոլեջը ստացել նաև ֆինանսական օգնություն.

1. **140 000** (մեկ հարյուր քառասուն հազար դրամ) ապաստարանի կահավորման համար, Լիլյա Շալունցից,

2. **1 465 000** (մեկ միլիոն չորս հարյուր վաթսունհինգ հազար դրամ) Զանգեզուրի ՊՄԿ բարեգործական հիմնադրամից, թվով 15 ուսանողի ուսման վճարի փոխհատուցման համար,

3. **850 000** (ութ հարյուր հիսուն հազար դրամ) Զանգեզուրի ՊՄԿ բարեգործական հիմնադրամից,վառելափայտի համար:

Քոլեջը ձեռք է բերել ժամանակակից ՎԵԲ ԿԱՅՔ 550 000 դրամ արժողությամբ:

«ԱՐՄ ԹՌԱՍԹ» ՍՊԸ կազմակերպության միջոցով կատարվել է գույքի վերագնահատում 450 000 դրամ :

2023 թ. ընթաքում ստացված գույք

1. 10 հատ OptiPlex համակարգիչ,

2.պրոյեկտոր 2 հատ, տպիչսարք HP Laserjet Pro MFP

3. դյուրակիր համակարգիչ 1 հատ Laptop Dell 311

4.ուսանողական հավաքածու 10 հատ

5.գրատախտակ 1 հատ

6 արևային կայան 2 հատ՝ համապատասխան համակազմով:

Քոլեջի ֆինանսական գործունեության արդյունքները վերադաս մարմնին են ներկայացվում յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 6-ը:

Իսկ տարեկան հաշվետվությունը մինչև հաջորդ տարվա հունվարի 15-ը, որտեղ ամփոփված է լինում հաշվետու տարվա ֆինանսական գործունեությունը: